

ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մ. Հարությունյանը մասնակցել է սահմանամերձ Բարձրունի համայնքում Տիեզերագնացի օրվան նվիրված միջոցառմանը

Ապրիլի 12-ին Վայոց ձորի մարզի սահմանամերձ Բարձրունի համայնքի միջնակարգ դպրոցում մեծ տոնախմբություն էր: Միջոցառումը նվիրված էր Տիեզերագնացի օրվան:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մ. Հարությունյանը, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ Ա. Հովհաննիսյանը, ինչպես նաև Հայաստանում Հայ-ռուսական համագործության ներկայացուցչության ղեկավարի տեղակալ, Հայաստանի Հանրապետություն Ռուսաստանի Դաշնության դեսպանատան առաջին քարտուղար Ի. Վ. Կուսովը, Հայաստանում Ռուսաստանի Դաշնության ռուսաց լեզվի ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն Գ. Բարիկյանը, համակարգող Ս.

Սարաջյանը: Ցերեկույթի մասնակիցներ էին դպրոցի աշակերտները և ուսուցիչները:

Դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի Ժ. Ավետյանի ղեկավարությամբ աշակերտները ռուսաց լեզվով տեղեկություն հաղորդեցին տիեզերագնացների կյանքի և գործունեության մասին: Միջոցառումն ավարտվեց փոքրիկ բեմադրությամբ:

Դպրոցի տնօրեն Ա. Սարգսյանը խոսեց հայ-ռուսական հարատև, անխախտ բարեկամության մասին, որի ամուր հիմքերը դրվում են նաև կրթական հաստատություններում:

Հյուրերը նախ շնորհակալություն հայտնեցին ջերմ հյուրնկալության և դպրոցի գրադարանին նվիրեցին ռուսական գրականություն: Նրանք տպավորված հեռացան դպրոցից՝ նոր հանդիպման ակնկալիքով: